

2009/739/ԵՀ. «Ներքին շուկայում ծառայությունների մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2006/123/ԵՀ հրահանգի (ծանուցված՝ C(2009) 7493 փաստաթղթի համաձայն) VI գլխի համաձայն անդամ պետությունների միջև էլեկտրոնային միջոցներով տեղեկությունների փոխանակման գործնական միջոցառումներ սահմանող՝ Հանձնաժողովի 2009 թվականի հոկտեմբերի 2-ի որոշում (Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

Պաշտոնական տեղեկագիր L 263 , 07.10.2009թ., էջեր 0032 - 0034

«Ներքին շուկայում ծառայությունների մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2006/123/ԵՀ հրահանգի (ծանուցված՝ C(2009) 7493 փաստաթղթի համաձայն) VI գլխի համաձայն անդամ պետությունների միջև էլեկտրոնային միջոցներով տեղեկությունների փոխանակման գործնական միջոցառումներ սահմանող՝ Հանձնաժողովի 2009 թվականի հոկտեմբերի 2-ի որոշում (Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ) (2009/739/ԵՀ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով «Ներքին շուկայում ծառայությունների մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի 12-ի 2006/123/ԵՀ հրահանգը [1] և, մասնավորապես, դրա 36-րդ հոդվածի երկրորդ նախադասությունը,

տվյալների պաշտպանության հարցերով Եվրոպական վերահսկիչ մարմնի հետ խորհրդակցելուց հետո,

Քանի որ

1) 2006/123/ԵՀ հրահանգի 28-36-րդ հոդվածների համաձայն անդամ պետությունների վրա դրված՝ փոխադարձ օգնության և միմյանց հետ արդյունավետ համագործակցության պարտավորությունը ենթադրում է նրանց իրավասու մարմինների միջև տեղեկությունների փոխանակում: Անդամ պետությունների միջև բավարար համագործակցության համար անհրաժեշտ է, որ այն իրականացվի օժանդակ տեխնիկական միջոցների օգնությամբ, որոնք նրանց իրավասու մարմինների միջև անմիջական և արագ հաղորդակցության հնարավորություն են ընձեռում: Այդ նպատակով 2006/123/ԵՀ հրահանգի 34(1) հոդվածով նախատեսվում է, որ Հանձնաժողովը, անդամ պետությունների հետ համագործակցելով, պետք է ստեղծի անդամ պետությունների միջև

տեղեկությունների փոխանակման էլեկտրոնային համակարգ՝ հաշվի առնելով գործող տեղեկատվական համակարգերը,

2) «Պետական կառավարման մարմիններին, ձեռնարկություններին և քաղաքացիներին համակերպական էլ.-կառավարության ծառայությունների փոխադարձ մատուցման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2004 թվականի ապրիլի 21-ի 2004/387/ԵՀ որոշման համաձայն ստեղծված Ներքին շուկայի տեղեկատվական համակարգը (ՆՇՏ) [2] էլեկտրոնային գործիք է, որը նախատեսված է ապահովելու ներքին շուկայի ոլորտում մի շարք այնպիսի օրենսդրական ակտերի կիրարկումը, որոնք պահանջում են անդամ պետությունների մարմինների միջև տեղեկությունների փոխանակում, և քանի որ ՆՇՏ-ն հնարավոր է դարձնում իրավասու մարմինների միջև էլեկտրոնային միջոցներով տեղեկությունների ապահով և համակարգված փոխանակումը, և քանի որ այն նաև հնարավորություն է տալիս իրավասու մարմիններին հեշտությամբ գտնելու այլ անդամ պետություններում համապատասխան կոնտակտային անձին և արագ ու արդյունավետորեն հաղորդակցվելու միմյանց հետ, նպատակահարմար է ՆՇՏ-ն կիրառել 2006/123/ԵՀ հրահանգի նպատակներով՝ տեղեկություններ փոխանակելու համար,

3) անդամ պետությունների իրավասու մարմինների միջև էլեկտրոնային միջոցներով տեղեկությունների արդյունավետ փոխանակումը հնարավոր դարձնելու համար անհրաժեշտ է ՆՇՏ-ի միջոցով նման փոխանակման համար գործնական միջոցառումներ սահմանել,

4) տեղեկություններ տրամադրելու և ստուգումներ, տեսչական ստուգումներ ու հետաքննություններ իրականացնելու հարցումներից, ինչպես նաև դրանց տրվող պատասխաններից բացի՝ 2006/123/ԵՀ հրահանգը նախատեսում է տեղեկություններ փոխանակելու երկու հատուկ մեխանիզմներ՝ ծառայությունների մատուցման գործունեությանն առնչվող այնպիսի կոնկրետ լուրջ գործողությունների և հանգամանքների մասին տեղեկությունների փոխանակում, որոնք կարող են լուրջ վնաս հասցնել անձանց առողջությանը կամ անվտանգությանը կամ շրջակա միջավայրին (ահազանգեր)՝ 2006/123/ԵՀ հրահանգի 29(3) և 32(1) հոդվածների համաձայն, ինչպես նաև ծառայությունների անվտանգությանն առնչվող բացառիկ միջոցառումների մասին տեղեկությունների փոխանակում (ըստ կոնկրետ դեպքի շեղումներ)՝ 2006/123/ԵՀ հրահանգի 18-րդ և 35-րդ հոդվածների համաձայն,

5) քանի որ ահազանգերը վերաբերում են անձանց առողջությանը կամ անվտանգությանը կամ շրջակա միջավայրին սպառնացող լուրջ վտանգներին, տարբեր անդամ

պետություններում իրավասու մարմինների միջև սերտ համագործակցությունը էական նշանակություն ունի՝ համապատասխան վտանգը վերացնելու և այդ մարմիններին մյուս մարմինների կողմից ձեռնարկվող գործողությունների, ինչպես նաև վտանգի վերացման կամ առկայության մասին համապատասխան կերպով տեղեկացված պահելու համար: Ծառայություն մատուցողների և նրանց կողմից մատուցվող ծառայությունների նկատմամբ իրավասու մարմինների կողմից արդյունավետ վերահսկողությունը, ինչպես նաև ահազանգերում առկա անհատական տվյալների՝ համապատասխան կերպով պաշտպանությունն ապահովելու համար, անդամ պետության կողմից անհրաժեշտ է նախատեսել 2006/123/ԵՀ հրահանգի համաձայն տրված ահազանգի դադարեցում, եթե 29(3) և 32(1) հոդվածներով սահմանված պայմաններն այլևս չեն բավարարվում: Անդամ պետություններին պետք է հնարավորություն տրվի առարկելու ահազանգի դադարեցման առաջարկության դեմ, եթե անձանց առողջության կամ անվտանգության կամ շրջակա միջավայրի լուրջ վնասի վտանգը շարունակվում է,

6) 2006/123/ԵՀ հրահանգի 43-րդ հոդվածի համաձայն՝ այդ հրահանգի կիրարկումը և կիրառումը և, մասնավորապես, վերահսկողության մասին դրույթները պետք է համապատասխանեն անհատական տվյալների պաշտպանության մասին կանոններին, որոնք նախատեսված են «Անհատական տվյալների մշակման առնչությամբ անձանց պաշտպանության և այդ տվյալների ազատ տեղաշարժի մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1995 թվականի հոկտեմբերի 24-ի 95/46/ԵՀ հրահանգով [3] ու «Անհատական տվյալների մշակման և էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում գաղտնիության պահպանության վերաբերյալ» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2002 թվականի հուլիսի 12-ի 2002/58/ԵՀ հրահանգով (գաղտնիության և էլեկտրոնային հաղորդակցության մասին հրահանգ) [4]: Հետևաբար, անդամ պետությունների միջև էլեկտրոնային միջոցներով տեղեկությունների փոխանակումը պետք է իրականացվի 95/46/ԵՀ և 2002/58/ԵՀ հրահանգներով նախատեսված՝ անհատական տվյալների պաշտպանության մասին կանոնների համաձայն: Հանձնաժողովի կողմից տեղեկությունների մշակումն իրականացվում է «Համայնքի կառույցների և մարմինների կողմից անհատական տվյալների մշակման առնչությամբ անձանց պաշտպանության և այդ տվյալների ազատ տեղաշարժի մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2000 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 45/2001 կանոնակարգի (ԵՀ) համաձայն [5],

7) ՆՇՏ-ի աշխատանքի առնչությամբ անհատական տվյալների պաշտպանության բարձր մակարդակ ապահովելու համար Հանձնաժողովն ընդունել է «Անհատական տվյալների պաշտպանության առնչությամբ Ներքին շուկայի տեղեկատվական համակարգի (ՆՇՏ)

կիրարկման վերաբերյալ» 2007 թվականի դեկտեմբերի 12-ի 2008/49/ԵՀ որոշումը [6] և «Ներքին շուկայի տեղեկատվական համակարգի (ՆՇՏ) համար սվյալների պաշտպանության ուղեցույցի մասին» 2009 թվականի մարտի 26-ի 2009/329/ԵՀ առաջարկությունը [7],

8) սույն Որոշմամբ նախատեսված միջոցները համապատասխանում են 2006/123/ԵՀ հրահանգի 40-րդ հոդվածով ստեղծված Կոմիտեի եզրակացությանը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՈՐՈՇՈՒՄԸ.

Հոդված 1

Տեղեկություններ փոխանակելու համար ՆՇՏ-ի կիրառումը

1. Ներքին շուկայի տեղեկատվական համակարգը (ՆՇՏ) կիրառվում է անդամ պետությունների միջև՝ էլեկտրոնային միջոցներով տեղեկություններ փոխանակելու համար 2006/123/ԵՀ հրահանգի VI գլխով սահմանված՝ վարչական համագործակցության մասին դրույթները կատարելու նպատակով՝ նախատեսելով հետևյալը՝

ա) տեղեկություններ տրամադրելու և ստուգումներ, տեսչական ստուգումներ և հետաքննություններ իրականացնելու համար հարցումներ, ինչպես նաև դրանց պատասխանները՝ 2006/123/ԵՀ հրահանգի VI գլխի համաձայն.

բ) ահազանգեր՝ 2006/123/ԵՀ հրահանգի 29(3) և 32(1) հոդվածների համաձայն.

գ) ըստ կոնկրետ դեպքի՝ հարցումներ և ծանուցումներ՝ 2006/123/ԵՀ հրահանգի 35(2), (3) և (6) հոդվածով սահմանված կարգով:

2. 2008/49/ԵՀ որոշման 8-րդ հոդվածում նշված ՆՇՏ համակարգողները կարող են նշանակվել որպես 2006/123/ԵՀ հրահանգի 28(2) հոդվածով նախատեսված կապի ապահովող կետեր:

Հոդված 2

Տեղեկություններ տրամադրելու և ստուգումներ, տեսչական ստուգումներ և հետաքննություններ իրականացնելու հարցումների, ինչպես նաև դրանց պատասխանների հետ կապված ՆՇՏ-ի գործառույթները

Տեղեկություններ տրամադրելու և ստուգումներ, տեսչական ստուգումներ և հետաքննություններ իրականացնելու հարցումների, ինչպես նաև դրանց

պատասխաններն ստանալու նպատակով ՆՇՏ-ն ապահովում է հետևյալ գործողությունները.

- ա) հարցումների ուղարկում,
- բ) հավելյալ տեղեկությունների ուղարկում և հայցում,
- գ) հարցումների ընդունում,
- դ) հարցումների վերահասցեագրում,
- ե) հարցումներին պատասխանում:

Հոդված 3

Ահազանգերի հետ կապված ՆՇՏ-ի գործառույթները

1. Ահազանգերի մասին տեղեկություններ փոխանակելու նպատակով ՆՇՏ-ն ապահովում է հետևյալ գործողությունները՝

- ա) ահազանգերի ուղարկում, եթե բավարարված են 2006/123/ԵՀ հրահանգի 29(3) և 32(1) հոդվածներով սահմանված պայմանները.
- բ) ահազանգերի մասին հավելյալ տեղեկությունների ուղարկում և դրանց հայցում.
- գ) այն ահազանգերի հետ կանչում, որոնք ուղարկվում են առանց 2006/123/ԵՀ հրահանգի 29(3) և 32(1) հոդվածներով սահմանված պահանջների բավարարման.
- դ) ահազանգերում առկա տեղեկությունների շտկում.
- ե) ահազանգերը դադարեցնելու առաջարկությունների ուղարկում.
- զ) ահազանգերը դադարեցնելու առաջարկությունների դեմ առարկում.
- է) ահազանգերի դադարեցում, եթե 2006/123/ԵՀ հրահանգի 29(3) և 32(1) հոդվածներով սահմանված պահանջներն այլևս չեն բավարարվում:

2. Այլ անդամ պետություններ ահազանգեր ու հարակից տեղեկություններ ուղարկելու և այլ անդամ պետություններից ահազանգեր ստանալու նպատակով ՆՇՏ-ն ապահովում է ահազանգերի համակարգողի գործառույթը: Ահազանգերի համակարգողի գործառույթը կարող է իրականացվել 2008/49/ԵՀ որոշման 7-րդ և 8-րդ հոդվածներով նախատեսված ՆՇՏ սուբյեկտների կողմից:

3. Մինչ 2008/49/ԵՀ որոշման 4-րդ հոդվածով սահմանված կարգով համակարգից ջնջելը, դադարեցված ահազանգում առկա տեղեկությունները՝ ներառյալ անհատական տվյալները, այլևս չպետք է ՆՇՏ-ում որևէ օգտագործողի տեսանելի լինեն:

Հոդված 4

Ըստ կոնկրետ դեպքի շեղման մեխանիզմի հետ կապված՝ ՆՇՏ-ի գործառույթները

Ըստ կոնկրետ դեպքի շեղումների մասին տեղեկություններ փոխանակելու նպատակով ՆՇՏ-ն ապահովում է հետևյալ գործողությունները՝

ա) հարցման ուղարկում հիմնադրման անդամ պետությանը՝ 2006/123/ԵՀ հրահանգի 35(2) հոդվածի համաձայն.

բ) 2006/123/ԵՀ հրահանգի 35(2) հոդվածի համաձայն ուղարկված հարցմանը պատասխանում.

գ) Հանձնաժողովը և հիմնադրման անդամ պետություն ծանուցման ուղարկում՝ 2006/123/ԵՀ հրահանգի 35(3) և 35(6) հոդվածի համաձայն.

դ) (ա), (բ) և (գ) կետերով նախատեսված գործողությունների մասին համակարգողին ավտոմատ տեղեկացում:

Հոդված 5

Անհատական տվյալների պաշտպանությունը

Անդամ պետությունների միջև էլեկտրոնային միջոցներով տեղեկություններ փոխանակելու նպատակով անհատական տվյալների մշակումն իրականացվում է 95/46/ԵՀ և 2002/58/ԵՀ հրահանգների համաձայն:

Հանձնաժողովի կողմից անհատական տվյալների մշակումն իրականացվում է թիվ 45/2001 կանոնակարգի (ԵՀ) համաձայն:

Հոդված 6

Հասցեատերերը

Սույն Որոշումը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում, 2009 թվականի հոկտեմբերի 2-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Չարլի ՄաքՔրիվի

Հանձնաժողովի անդամ

[1] ՊՏ L 376, 27.12.2006թ., էջ 36:

[2] ՊՏ L 181, 18.05.2004թ., էջ 25:

[3] ՊՏ L 281, 23.11.1995թ., էջ 31:

[4] ՊՏ L 201, 31.07.2002թ., էջ 37:

[5] ՊՏ L 8, 12.01.2001թ., էջ 1:

[6] ՊՏ L 13, 16.01.2008 թ., էջ 18:

[7] ՊՏ L 100, 18.04.2009 թ., էջ 12: